



Հաստատված է  
Հյուսիսային համալսարանի  
գիտական խորհրդի  
2016թ. մայիսի 31 -ի որոշմամբ  
(արձ. No 17)

**Կարգ**  
Հյուսիսային համալսարանի հայցորդության

1. Հյուսիսային համալսարանի (այսուհետև՝ համալսարան) հայցորդության սույն կարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի No 238-Ն՝ «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի No 662 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման հիման վրա:

2. Համալսարանում հայցորդության ինստիտուտը գործում է Հայաստանի գիտական աստիճանավորման անվանացանկի այն մասնագիտությունների գծով, որոնցով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը համալսարանին տվել է ասպիրանտական կրթություն իրականացնելու իրավունք:

3. Հայցորդը մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձ է:

4. Համալսարանում հայցորդությունն իրականացվում է վճարովի հիմունքներով, համալսարանում սահմանված կարգով, որի տևողությունը չի գերազանցում 5 տարին:

5. Հայցորդ ձևակերպվելու համար անձի կամ նրա լիազորված անձի կողմից դիմումը տրվում է համալսարանի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

բ) հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը կամ ընտրված մասնագիտությունից գիտական ռեֆերատ,

գ) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),

դ) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է):

6. Համալսարանում հայցորդը ձևակերպվում է համալսարանի ռեկտորի հրամանով, և նրա հետ կնքվում է պայմանագիր:

7. Հայցորդի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատումը կատարվում է սահմանված կարգով:

8. Հայցորդի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը

բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:

9. Հայցորդը պետք է հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակի համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը և սահմանված կարգով անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

10. Հայցորդը տարեկան մեկ անգամ, սահմանված կարգով, աստեսավորվում է համալսարանի համապատասխան ամբիոնի կողմից:

11. Գիտական հետազոտություններ կատարելիս հայցորդն օգտվում է համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից և այլն:

12. Ատենախոսությունը չպաշտպանած հայցորդին, իր ցանկությամբ, անվճար տրվում է համալսարանի կողմից սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք՝ համալսարանի ռեկտորին հայցորդի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

13. Համալսարանի ռեկտորը կարող է սահմանված կարգով կատարել հայցորդի գիտական ղեկավարի վարձատրությունը (տարեկան առնվազն 30 ժամ):

Հյուսիսային համալսարանի  
գիտական հետազոտությունների,  
նորարարական ծրագրերի և հետրուհական  
մասնագիտական կրթության կենտրոն

*Գ. Կոչարյան*

« 20 » մայիսի 2016թ.